

Հայտարարություն դատավորի կողմից դոնբաց դատական նիստի լուսաբանումը արգելելու կապակցությամբ

Ապրիլի 14, 2016

Ապրիլի 13-ին, Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում փորձ է արվել անհիմն սահմանափակել Aravot.am կայքի թղթակից Ամի Չիչակյանի օրինական մասնագիտական աշխատանքը: Լրագրողը դատարան էր եկել լուսաբանելու Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օրը այլ անձանց փոխարեն քվեարկելու մեջ մեղադրվող, տեղական ընտրական հանձնաժողովի նախագահ Վեներա Թորոսյանի գործով դոնբաց դատական նիստը:

Մինչև նիստն սկսելը դատավոր Նելլի Բադդասարյանը Aravot.am-ի լրագրողին տեղեկացրել է, որ Վեներա Թորոսյանը չի ցանկանում, որպեսզի դատական նիստը տեսանկարահանվի: Այնուհետև Վեներա Թորոսյանը հայտարարել է, թե չի ցանկանում, որ դատական նիստն ընդհանրապես լուսաբանվի:

Լրագրողի դիտարկմանը, թե դատական նիստը դոնբաց է, տեղի ունեցածն էլ հանրային հետաքրքրություն է ներկայացնում, դատավոր Նելլի Բադդասարյանը պատասխանել է, որ իբր առկա է անձի անձեռնմխելիության եւ անձնական տվյալների գաղտնիության խնդիր:

Ամբաստանյալի փաստաբան Արմինե Ֆանյանն էլ սպառնացել է Aravot.am-ի լրագրողին, ասելով՝ եթե իր պաշտպանյալի անունը հայտնվի որեւէ հրապարակման մեջ, ապա լրատվամիջոցը խնդիրներ կունենա:

Դատարանը բավարարել է ամբաստանյալի եւ նրա փաստաբանի միջնորդությունը եւ որոշել է արգելել դատական նիստի լուսաբանումը:

Խորհրդակցելով իրավաբանների ու մեդիա փորձագետների հետ՝ Ամի Չիչակյանը, այդուհանդերձ, լուսաբանել է դատական նիստը:

Հաշվի առնելով հարցի հրատապությունը եւ հիշեցնելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի «Արգելվում է՝ որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դատարածելուց հրաժարվելուն նպատակառոտ դրված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ» դրույթը, մենք՝ ներքոստորագրյալներս, պահանջում ենք.

– Դատավորից՝ չեղյալ համարել որոշումը, քանի որ դոնբաց դատական նիստը ՁԼՄ-ներում լուսաբանել չթույլատրելու ոչ մի իրավական հիմք չկա՝ հատկապես հաշվի առնելով գործի հանրային հնչեղությունն ու կարեւորությունը,

– Ամբաստանյալի փաստաբանից՝ ձեռնպահ մնալ լրագրողների հասցեին սպառնալիքներ հնչեցնելուց՝ հաշվի առնելով, որ դա պատասխանատվություն է ենթադրում ՀՀ քրեական

օրենսգրքի 164-րդ հոդվածով, եւ ներողություն խնդրել Aravot.am-ի թղթակից Ամի Չիչակյանից տեղի ունեցածի համար:

Aravot.am-ին եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներին կոչ ենք անում՝ չընկրկել այս եւ նման այլ ապօրինի սահմանափակումների առջեւ, դիմակայել դրանց, հարազատ մնալ մասնագիտական սկզբունքներին եւ լուսաբանել հանրային կարեւորություն ունեցող բոլոր իրադարձությունները:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵՂԻԱ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ